եւ Թ.Ջ. դարը նա ծնացել է իբրեւ մի հասարակ գիւղաքաղաք, բայց այդ ժամանակից յետոյ սկսւում է հռչակուել իբրեւ վաճառականական անուանի քաղաք եւ նրա բնակիչներն իբրեւ հարուստ եւ ժիր վաճառականներ "խօջա" մականունով: Ցեսներնք ինչ տեսարան էր ներկայացնում նա: Ջուղան զետեղուած էր, ինչպէս եւ այսօր կարելի է տեսնել աւերակներից, մի խոր ձորակի մէջ, կարմիր ժայռերի մի սարի զառիվայրի վրայ. նրա աջ կողմով, ամբողջ երկարութեամբը հոսում է Երասխ գետը. սարի ժայռերը, որոնցով նա շրջապատուած է համարեա երեք կողմից՝ քաղաքի երկու ծայրերումն եւս այնքան մօտեցած են Երասխին, որ կազմում են նեղ անցք եւ այդ անցքերի տեղը շինուած են մուտքերը, որոնք նոյն իսկ բնութիւնից դժուարանցանելի եւ ամուր լինելով՝ պահպանւում էին բերդերով եւ դարպասներով: Գլխաւոր մուտքը լինում էր արեւելեան դարպասով, երբ փոքր ինչ անցնում էին Երասխը կամրջով, առաջ այն հռչակաւոր հոյակապ պատմական կամրջով, որի մասին փոքր ինչ յետոյ կը խօսենք, իսկ յետոյ, այն է Ժե. եւ Թ.Ջ. դարերում, շարժական կամրջով: Այդ շարժական կամուրջն հետեւեալ կերպով էր շինուած: Երասխի երկու ափերում կանգնած էին երկու մեծ շինութիւններ, որոնք քարվանսարայներ էին վաճառականների համար: Պարսկաստանից, Հնդկաստանից եկող կարաւանները դալիս կանգ էին առնում գետի միւս ափում,